ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Լիլիթ Ավետիսյան
Սոնա Մանուսյան

Ներածություն

Կամավորությունը վերջին մի քանի հարյուրամյակներում լայնորեն տարածվող սոցիալական երևույթներից է, որն ուսումնասիրվում և քննարկվում է տարբեր սոցիալական գիտություններում, այդ թվում՝ հոգեբանության մեջ: Այստեղ հիմնականում դիտարկվում են կամավորական գործունեության դրդապատճառային համակարգը և կամավորների ալտրուիստական կամ օգնողական վարքն ու դիրքորոշումները: Հոգեբանական հետազոտություններում և մոտեցումներում հաճախ բաց են թողնվում կամավորական գործունեությունն իրականացնող մարդու՝ կամավորի անձնային յուրահատկությունները հենց կամավորական գործունեության մեջ: Կամավորի անձի կառուցվածքի հիմնարար բաղադրիչի՝ նույնականության դիտարկումը հնարավորություն է ընձեռում պատասխանել այն հարցին, թե կամավոր կերպով օգնելն անձի Ես-կերպարի հետ ինչ առնչություն ունի, և հատկապես դրա որ բաղադրիչով է պայմանավորված:

Կամավորություն և սոցիալամետ վարք

Համադրելով կամավորություն (անգլ. volunteerism) հասկացության՝ տարբեր հեղինակների առաջարկած սահմանումները՝ կարող ենք նշել, որ այն անհատի կողմից գիտակցված սոցիալական օգնողական գործողություն է, որն անմիջականորեն ուղղված չէ ֆինանսական վարձատրության ստացմանը, արտահայտում է մարդու ազատ ընտրությունն առանց ստիպողության կամ պարտականությունների և ուղղված է ուրիշների օգտին [1, 3, 6, 8]:

Իսկ Ի. Լևդերը հավելում է, որ կամավորությունը շահավետ գործունեություն է ինչպես օգնություն ստացողների, այնպես էլ կամավորների համար, քանի որ այն տալիս է սոցիալական հարաբերությունների կառուցման, բարոյական և կրոնական սկզբունքների դրսևորման, նոր հմտությունների ու ընկերների ձեռքբերման և պիտանի ու օգտակար լինելու հնարավորություն: Հետևաբար, կամավորական գործունեությունն, ուղղված լինելով ուրիշի բարեկեցությանը, ունի կազմակերպված և կանոնակարգված, ինչպես նաև, վերջին հաշվով, փոխշահավետ բնույթ [2]:

Կամավորական գործունեությունը բովանդակային առումով կապակցված է «ալտրուիզմ» (այլասիրություն) կամ «ալտրուիստական (այլասիրական) գործունեություն», «պրոսոցիալական վարք» կամ «օգնողական վարք» հասկացություններին և երբեմն նույնացվում է նրանց հետ: Սակայն վերոնշյալ հասկացությունների բովանդակային կողմի մանրամասն դիտարկումն իմաստային տարանջատման հնարավորություն է տալիս: Այսպես, ալտրուիզմը (լատ. alter՝ ուրիշը) օգնելու դիրքորոշում է՝ առանց որևէ պարգևատրման ակնկալիքի, որի հիմքում ընկած են անձի հատկությունները և վերաբերմունքն այլ անձանց նկատմամբ: Ալտրուիստական դիրքորոշումները կարող են ընկած լինել անձի կողմից դրսևորվող օգնողական գործողությունների հիմքում (ալտրուիստական գործունեություն): Իսկ պրոսոցիալական վարքը ներառում է սոցիալական ուղղվածության օգնողական ցանկացած գործողություն՝ հիմնված անձի դրդապատճառների վրա, որոնք կարող են լինել ինչպես ալտրուիստական, այնպես էլ եսակենտրոն: Հետևաբար, պրոսոցիալական վարքը մի երկայնք է, որի մի ծայրին գտնվում են ալտրուիստական դրդապատճառներով կատարվող անձնազոհ գործողությունները, մյուս ծայրին՝ ինքնահետաքրքրության դրդապատճառներով կատարվող եսակենտրոն գործողությունները:

Համաձայն Շ. Թեյլորի, Լ. Պեպլաուի և Դ. Սիերսի՝ կամավորական գործունեությունը պրոսոցիալական գործունեության երեք տեսակներից մեկն է, որը, դրսևորվելով կամավորական կազմակերպությունների կամ անհատների միջոցով, օգնություն է տալիս միլիոնավոր մարդկանց: Այն կամավոր սկզբունքով ժամանակի, ծառայությունների և գումարի տրամադրումն է հասարակությունում առկա սոցիալական խնդիրներին [13]:

Հետևաբար, «պրոսոցիալական գործունեությունը կամ վարքը» ընդհանրական և լայն հասկացություն է, որը ներառում է «ալտրուիզմ» և «կամավորություն», ինչպես նաև «ալտրուիստական գործունեություն» և «կամավորական գործունեություն» հասկացությունները, որոնք դրա դրսևորման ձևերն են:

Կամավորություն և կամավորի օգնողական դիրքորոշումներ

Դիտարկելով օգնողական վարքը որպես եսակենտրոն կամ այլակենտրոն ուղղվածություն ունեցող գործողությունների ամբողջություն՝ կարող ենք ենթադրել, որ դրա երկու ձևերը՝ ալտրուիստական և կամավորական գործունեությունները, նույնպես ունեն և՛ եսակենտրոն, և՛ այլակենտրոն ուղղվածություններ: Եսակենտրոն ուղղվածությունը մենք անվանում ենք եսասիրական դիրքորոշումներ, իսկ այլակենտրոն ուղղվածությունները

(ուրիշ անձ կամ հասարակություն)՝ ալտրուիստական դիրքորոշումներ: Այսպիսով, կամավորական և ալտրուիստական գործունեություններն օգնողական գործունեության ձևեր են, որոնց հիմքում ընկած օգնողական դիրքորոշումները կարող են լինել և՛ ուրիշին օգնելու հակվածություն, և՛ սեփական անձի համար ձեռքբերումներ ունենալու ձգտում:

Կենտրոնանալով միայն կամավորական գործունեության հիմքում ընկած դիրքորոշումների համակարգի վրա՝ հարկ է նշել, որ կամավորներն իրենց անձնային առանձնահատկություններով օգնության հակված մարդիկ են, և նրանց մեջ գերակայում են հենց օգնողական դիրքորոշումները [8]: Այդ դիրքորոշումները կարող են լինել ինչպես եսակենտրոն, այնպես էլ այլակենտրոն ուղղվածության: Հետևաբար, կամավորական գործունեության հիմքում ընկած է օգնողական դիրքորոշումների համակարգ, որտեղ կարող են գերակայել և համապատասխանաբար դրսևորվել կամ եսակենտրոն օգնողական դիրքորոշումները (անձնային ուղղվածության դիրքորոշումներ), կամ այլակենտրոն օգնողական դիրքորոշումները (սոցիալական ուղղվածության դիրքորոշումներ): Այսինքն՝ անկախ նրանից, թե օգնողական դիրքորոշումներն ինչ ուղղվածություն ունեն՝ անձնային, թե սոցիալական, դրանք դրսևորվում են միևնույն ձևով՝ օգնողական վարքով, մասնավորապես՝ կամավորական գործունեությամբ:

Միևնույն ժամանակ, կամավորի օգնողական դիրքորոշումների համակարգում անձնային և սոցիալական ուղղվածությունների տարաբաժանումն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե բևեռների, այլ երկայնական առանցքի ձևով: Այսինքն՝ անձնային ուղղվածությունից դեպի սոցիալական ուղղվածություն առանցքում հնարավոր է առանձնացնել օգնողական դիրքորոշումների ուղղվածության մի քանի մակարդակներ՝ պայմանավորված իրավիճակով և այն պատճառներով, որոնք ընկած են գործունեության կատարման հիմքում: Հետևաբար, մենք առաջարկում ենք օգտագործել *«օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության մակարդակ»* հասկացությունը, որը բնորոշում է այն, թե տարբեր իրավիճակներում կամավորի օգնողական դիրքորոշումներն ինչ ուղղվածություն ունեն անձնային-սոցիալական առանցքում: Հիմնվելով մի շարք հեղինակների հետազոտական տվյալների վրա՝ քննարկենք օգնության ցուցաբերման տարբեր իրավիճակներ և առանձնացնենք օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության մակարդակները: Այսպես, կամավորական գործունեության հիմքում կարող են ընկած լինել կամավորների անձնային գծերը, անձնային շահը կամ սեփական անձով հետաքրքրվածությունը [նույն տեղում]: Այս դեպքում կամավորի օգնողական դիրքորոշումներն անձնային-սոցիալական առանցքում ուղղված

են դեպի անձնայինը, հետևաբար՝ կարող ենք առանձնացնել *օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության անձնային մակարդակը:*

Կամավորական գործունեության հիմքում կարող են ընկած լինել նաև նշանակալի մարդկանց օգնություն ցուցաբերելու դիրքորոշումները: Դրա մասին են վկայում Ա. Օմոտոյի (A. Omoto, 2002), Դ. Հասկի-Լևենթալի, Ա. Բեն-Արիեի և Գ. Մելթոնի (D. Haski-Leventhal, B. Arieh, G. Melton, 2008) կողմից իրականացված հետազոտությունների տվյալները, համաձայն որոնց՝ որոշ դեպքերում մարդիկ հակված են օգնություն ցուցաբերել իրենց մոտ մարդկանց, մասնավորապես՝ ընկերներին և բարեկամներին կամ հարևաններին [մեջբերված է ըստ 8, էջ 279-280]: Հետևաբար, այս դեպքում կարող ենք խոսել օգնողական դիրքորոշումների *սոցիալական ուղղվածության միջանձնային մակարդակի մասին*:

Կամավորական գործունեության հիմքում ընկած գործոններից մեկն էլ կարող է հանդիսանալ որոշակի սոցիալական խմբին պատկանելության զգացումը: Ս. Սառասոնը (S. Sarason, 1974) նշում է, որ երբ անձն իրեն զգում է մեծ կոլեկտիվի մի մաս, ալտրուիզմը հանդիսանում է անձի՝ հանրույթին հոգեբանական պատկանելության իմաստը [նույն տեղում, էջ 278]: Իսկ Մ. Օկանը և Ջ. Միշելը (M. Okun, J. Mischel, 2006) նշում են, որ կամավորությունը կապված է հանրույթի մի մաս լինելու զգացման հետ երկու ճանապարհով. կամավորությունն ավելացնում է հանրույթի մի մաս լինելու իմաստը, և հանրույթի մի մաս լինելու զգացումը հանդիսանում է ապագա կամավորության կատարման ցուցանիշ [նույն տեղում 8, էջ 279]: Ասվածը թույլ է տալիս խոսել օգնողական դիրքորոշումների *սոցիալական ուղղվածության սոցիալ-կոլեկտիվ մակարդակի մասին:*

Մյուս կողմից, կամավորական գործունեության հիմքում ընկած գործոնների շարքին կարող են դասվել մշակութային կամ խմբային գործոնները: Անհատի պատկանելությունը որևէ սոցիալական խմբին կամ մշակույթին ազդեցություն է ունենում անձի օգնողական դիրքորոշումների վրա [14]: Ուստի, այս դեպքում մենք կարող ենք առանձնացնել օգնողական դիրքորոշումների *սոցիալական ուղղվածության մշակութային մակարդակը:*

Կամավորական գործունեության հիմքում կարող է ընկած լինել նաև անձի արժեքային համակարգը: Լ. Սագիվը և Շ. Շվարցը նկարագրում են 10 անձնային արժեքներ, որոնք ազդեցություն են ունենում անձի դիրքորոշումների և վարքի վրա: Այդ արժեքներից առավել ազդեցիկ է բարյացակամության (benevolence) արժեքը, որը ներառում է ուրիշի բարեկեցությունը, պատասխանատվության և նվիրվածության ձգտումը, ուրիշների հետ ազնիվ հարաբերությունները և օգնության ցուցաբերումը դիսթրեսի ժամանակ: Այս ամենը հիմք է հանդիսանում, որպեսզի մենք առանձնացնենք

օգնողական դիրքորոշումների *սոցիալական ուղղվածության ունիվերսալիստական* կամ *համամարդկային մակարդակը*, որն, արտահայտելով ներքնայնացված արժեքներ և գաղափարներ, կարող է ուղղված լինել ինչպես դեպի սոցիալական, այնպես էլ դեպի անձնային հարթություն [11]:

Այսպիսով՝ մենք առանձնացրինք *«օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության մակարդակ»* հասկացությունը, որը բնորոշում է այն, թե կամավորական գործունեության հիմքում ընկած անձի օգնողական դիրքորոշումներն ուր են ուղղված՝ դեպի արտաքին երևույթները (այլ մարդիկ, խումբ, հասարակություն, մշակույթ), թե դեպի սեփական անձը (անձնային շահ, ինքնահետաքրքրություն), թե երկուսի համադրությունը (մարդկություն): Համապատասխանաբար, մենք առանձնացնում ենք *օգնողական դիրքորոշումների ուղղվածության հինգ մակարդակ՝ անձնային, միջանձնային, սոցիալ-կոլեկտիվ, մշակութային և ունիվերսալիստական (համամարդկային),* որոնք կազմում են ամբողջական համակարգ, և կախված իրականացվող կամավորական գործունեության բնույթից՝ կարող է գերակայել և համապատասխանաբար դրսևորվել դրանցից մեկը կամ մի քանիսը:

Կամավորություն և կամավորի նույնականության կառուցվածք

Կամավորի կողմից սեփական անձի ընկալումը՝ նույնականության կառույցը, ըստ սոցիալ-կոգնիտիվ մոտեցման մենք դիտարկում ենք դիրքորոշումների համակարգի ձևով, որոնք ուղղված են սեփական անձին և ձևավորում են սեփական անձի մասին պատկերացումներն ու վերաբերմունքը: Կամավորի նույնականությունը փոխկապված է սոցիալական միջավայրի հետ և կախված լինելով անձի ինքնընկալումից ու ինքնահասկացումից՝ ազդեցություն է ունենում անձի գործունեության և ինքնաներկայացման վրա:

Սոցիալ-կոգնիտիվ ուղղության ներկայացուցիչներ Մ. Բրիվերը և Ու. Գարդներն անձի նույնականությունը կամ Ես-կոնցեպցիան դիտարկում են որպես երեք՝ անհատական, միջանձնային և կոլեկտիվ մակարդակներից բաղկացած դիրքորոշումների և պատկերացումների ամբողջություն՝ ուղղված սեփական անձին և շրջակա միջավայրին: Անհատական մակարդակում նրանք առանձնացնում են անձնային Ես-ը՝ որպես նույնականության բաղադրիչ, որն անձի՝ ուրիշներից տարբերվելու գիտակցումն է: Միջանձնային մակարդակում առանձնացնում են միջանձնային Ես-ը, որը կապվում է նշանակալի մարդկանց հետ կապվածության և դերային փոխհարաբերությունների հետ, իսկ խմբային մակարդակում՝ կոլեկտիվ Ես-ը,

որն անձի պատկանելության զգացումն է որևէ սոցիալական խմբի: Ես-ի այս երեք բաղադրիչները հանդիսանում են նրա տարբեր մակարդակները, և մարդու ինքնորոշումը տեղակայված է «Ես»-ի և «Մենք»-ի միջև: Կախված այդ ինքնորոշման փոփոխությունից՝ փոփոխվում են նաև մարդու ինքնահասկացման բովանդակությունը, ինքնագնահատման ու դիրքորոշումների համակարգը և սոցիալական մոտիվացիայի բնույթը [4]: Վերջին երկու՝ միջանձնային և կոլեկտիվ մակարդակներն, իրենց հերթին, մենք կմիավորենք *սոցիալական մակարդակի* մեջ, որն արտահայտում է անձի ներկայանալը սոցիալական միջավայրին համեմատվելու միջոցով: Նույնականության բաղադրիչները գտնվում են հիերարխիկ փոխհարաբերության մեջ, այսինքն՝ կախված իրավիճակից, անձի մեջ գերակայում է այդ բաղադրիչներից որևէ մեկը՝ արտահայտելով անձի դիրքորոշումներն ինչպես դեպի սեփական անձը, այնպես էլ դեպի շրջակա միջավայրը: Անձի նույնականությունը, հանդիսանալով 4 բաղադրիչների դինամիկ համակարգ, պահպանում է իր ամբողջականությունը: Իրավիճակից կամ գործունեության բնույթից կախված՝ արտահայտվում է դրա բաղադրիչներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ՝ արտահայտվելով սեփական անձին և արտաքին միջավայրին ուղղված դիրքորոշումներով [4, 7, 9, 12]:

Այսպիսով, եթե մենք կամավորական գործունեությունը դիտարկենք որպես ուրույն իրավիճակ, ապա կամավորի նույնականության համակարգում պետք է ակտիվանա նույնականության բաղադրիչներից կա՛մ մեկը, կա՛մ մի քանիսը, որոնք փոխկապակցված են այդ գործունեության կատարման հիմքում ընկած օգնողական դիրքորոշումների հետ: Հետևաբար, ավելի վերը նկարագրված՝ կամավորների օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության մակարդակները և նույնականության մակարդակները հատվում են կամավորական գործունեության հիմքում ընկած դիրքորոշումների համակարգում՝ արտահայտելով անձի վերաբերմունքը սեփական անձին և շրջակա միջավայրին:

Հետազոտության մեթոդաբանությունը

Կամավորական գործունեության դիրքորոշումների համակարգի կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները պարզաբանելու համար մենք իրականացրել ենք փորձարարական հետազոտություն: Վերջինիս հիմնական նպատակն է դուրս բերել կամավորների դիրքորոշումների համակարգում վերը նկարագրված սոցիալական ուղղվածության 5 մակարդակներում օգնողական դիրքորոշումների և նույնականության 4 մակարդակներում անձի և շրջակա աշխարհի նկատմամբ

դիրքորոշումների փոխկապակցվածությունը և փոխադարձ պայմանավորվածությունը: Հետազոտությունն իրականացվել է 2013թ. հունվար-ապրիլ ամիսներին 97 անձանց հետ, որոնցից 61-ը կամավորության փորձ ունեցած անձինք են՝ կամավորներ, իսկ 36-ը՝ ոչ կամավորներ, ովքեր հանդիսանում են ստուգիչ խումբ և ընտրվել են կամավորների խմբի անդամների սեռային, տարիքային, մասնագիտական չափանիշներին համանման: Հետազոտական աշխատանքում օգտագործել ենք հարցաթերթի, անձնային հարցարանների և վիճակագրական վերլուծության մեթոդներ: Կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

- Ալտրուիստական դիրքորոշումների ինքնագնահատման հարցարան, որը դուրս է բերում անձի՝ օգնելու հակվածության մակարդակը [10]:
- Օգնողական դիրքորոշումների ակտիվացման ուսումնասիրման հարցարան, որը մշակվել է մեր կողմից: Այն բաղկացած է 2 մասից, որոնցից առաջինը դուրս է բերում իրավիճակային, իսկ երկրորդը՝ ընդհանուր օգնողական դիրքորոշումները սոցիալական ուղղվածության 5 մակարդակներում՝ անձնային, միջանձնային, սոցիալ-կոլեկտիվ, մշակութային, ունիվերսալ: Մեթոդիկայի առաջին մասն (Մաս I), իր հերթին, բաղկացած է 2 կետից: Յուրաքանչյուր կետում ներկայացված է իրավիճակ, որտեղ ակնկալվում է օգնության ցուցաբերում: Առաջին կետում ներկայացված է իրավիճակ, որտեղ օգնություն պետք է ցուցաբերել օգնության կարիք ունեցող մարդուն, իսկ երկրորդ կետում՝ օգնություն խնդրող մարդուն: Յուրաքանչյուր կետի համար հետազոտվողն իր կողմից ցուցաբերվող օգնության հավանականությունը գնահատում է 1-ից 4 բալային սանդղակով: Գնահատումը հետազոտվողը կատարել է սոցիալական ուղղվածության 4 մակարդակներից յուրաքանչյուր տարբերակի համար՝ միջանձնային (մոտ մարդիկ՝ ընտանիքի անդամներ, ընկերներ և այլն), միջանձնային-խմբային (ծանոթ մարդիկ՝ հարազատներ, հարևաններ, աշխատակիցներ/համակուրսեցիներ և այլն), սոցիալ-կոլեկտիվ (սոցիալական խմբին պատկանող անձ), մշակութային (այլ մշակույթի ներկայացուցիչ), ունիվերսալիստական (անծանոթ, մարդկություն, հասարակություն): Հարցարանի երկրորդ մասը (Մաս II) բաղկացած է 25 պնդումից, որոնց հետ համաձայնության աստիճանը հետազոտվողը գնահատում է 1-ից 5 բալային սանդղակով: Հարցարանի 25 պնդումները բաշխված են ըստ վերոնշյալ 5 սոցիալական ուղղվածության մակարդակների՝ անձնային (օրինակ՝ «Եթե ես օգնեմ այլ մարդու, ապա կունենամ բավարարվածության զգացում», «Ինձ բնորոշ գծերից է

այլ մարդկանց օգնելը»), միջանձնային (օրինակ՝ «Ես կօգնեմ իմ շրջապատի այն մարդկանց, որոնց բարեկեցությունը կարևոր է ինձ համար», «Ես կտամ իմ աշխատած գումարը քրոջս/եղբորս, եթե նա դրա կարիքն ունենա»), սոցիալ-կոլեկտիվ (օրինակ՝ «Ես կմոտենամ փողոցում ընկած ծեր տղամարդուն/կնոջը և կբարձրացնեմ նրան», «Ես հակված եմ օգնել մարդկանց, որովհետև այդպես է ընդունված իմ շրջապատի/շրջանի մարդկանց մոտ»), մշակութային (օրինակ՝ «Ես կօգնեմ այլ ազգի ներկայացուցչին, եթե նա ինձ դիմի ինչ-որ հարցով/խնդրանքով», «Մարդկանց պետք է օգնել անկախ ազգային պատկանելությունից») և ունիվերսալիստական (օրինակ՝ «Եթե դու օգնես անծանոթին, ապա մի օր էլ քեզ կօգնեն», «Բոլոր մարդիկ արժանի են օգնություն ստանալու»): (Հարցարանն իր երկու մասերով ներկայացված է Հավելվածում):

- Նույնականության ասպեկտների դուրսբերման հարցարան (Aspects of Identity Questionnaire (AIQ-IV)), որն ուղղված է նույնականության 4՝ անձնային, միջանձնային, սոցիալական և կոլեկտիվ բաղադրիչների դուրսբերմանը [5]:
- Հարցաթերթ՝ ուղղված հետազոտվողների անձնական տվյալների և կամավորական աշխատանքի առանձնահատկությունների դուրսբերմանը (մշակված մեր կողմից): Հարցաթերթը բաղկացած է երկու խումբ հարցերից: Առաջինի միջոցով դուրս են բերվել անձնական տվյալներ՝ տարիքը, սեռը, մասնագիտությունը, կրթությունը, աշխատանքային փորձի առկայությունը, որոնք անհրաժեշտ էին կամավորների և ոչ կամավորների միատարրության ճշգրտման համար և լրացվել են ընտրանքի երկու խմբերի կողմից: Իսկ հարցերի երկրորդ խումբը նախատեսված է եղել միայն կամավորների ընտրանքի համար և ուղղված է կամավորական աշխատանքի առանձնահատկությունների դուրբերմանը՝ կամավորական աշխատանքի ոլորտ, տևողություն, հաճախականություն և միջազգային կամավորական փորձի առկայություն:
- Վիճակագրական և մաթեմատիկական վերլուծության մեթոդներ՝ կորելյացիոն (r-Pearson, r-Spearmen) և ռեգրեսիոն վերլուծություն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Կամավորների նույնականության բաղադրիչների և օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակների միջև բազմաթիվ և նշանակալի կորելյացիոն կապեր են դիտվել, որոնց ցուցանիշները ներկայացված են կորելյացիոն մատրիցայում *(Աղյուսակ 1)*.

Աղյուսակ 1. **Կամավորների նույնականության բաղադրիչների և օգնողական դիրքորոշումների միջև կորելյացիաներ**

Նույ-նակա-նության բաղադրիչ-ներ		**Օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության մակարդակներ**						Ալտրուիս-տական	Ընդհ. օգնո-ղական
		Անձն.	Միջ-անձն.	Միջանձ. իրավի-ճակային	Սոցիալ-կոլեկ-տիվ	Մշա-կու-թային	Ունիվեր-սալիս-տական		
Անձնային	r	,324*	,360**	,383**	,335**	-,024	,340**	,289*	,415**
	(p)	,011	,004	,002	,008	,856	,007	,024	,001
Միջանձ-նային	r	,385**	,399**	,456**	,430**	-,073*	,436**	,335**	,460**
	(p)	,002	,001	,000	,001	,039	,000	,008	,000
Սոցիալա-կան	r	,406**	,237	,263*	,374**	-,111	,271*	,261*	,244
	(p)	,001	,066	,040	,003	,394	,035	,042	,059
Կոլեկտիվ	r	,326*	,225	-,034	,372**	-,173	,247	,155	,338**
	(p)	,010	,081	,795	,003	,183	,055	,234	,008

Ծանոթագրություն՝ r- կորելյացիոն գործակից (r-Pearson, r-Spearmen), p-վիճակագրորեն նշանակալիության գործակից, * p< ,05 և ,01, p ** < ,001

Այսպես, նույնականության անձնային բաղադրիչը փոխկապակցված է օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության անձնային (r=.324, p=.011), միջանձնային (r=.36, p=.004), սոցիալ-կոլեկտիվ (r=.3-35, p=.008) և ունիվերսալիստական (r=.34, p=.007) մակարդակներ-ի, ինչպես նաև ընդհանուր օգնողական (r=.415, p=.001) և ալտրուիս-տական (r=.289, p=.024) դիրքորոշումների հետ: Նույնականության միջանձնային բաղադրիչի հետ կորելյացիոն կապեր են դրսևորել օգնող-ական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության անձնային (r=.322, p=.011), միջանձնային (r=.399, p=.001), սոցիալ-կոլեկտիվ (r=.469, p=.000), մշակութային (r=-.073, p=.039) և ունիվերսալիստական (r=.45, p=.000) մակարդակները, ինչպես նաև ընդհանուր օգնողական (r=.46, p=.000) և ալտրուիստական (r=.335, p=.008) դիրքորոշումները: Նույնականության սոցիալական բաղադրիչի հետ կորելյացիոն նշանակալի կապեր են դրսևորել օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության անձնային (r=.326, p=.010), միջանձնային (r=.257, p=.040), սոցիալ-կոլեկտիվ (r=.365, p=.004) մակարդակները, ինչպես նաև ընդհանուր օգնողական (r=.338, p=.008) և ալտրուիստական (r=.261, p=.042) դիրքորոշումները: Նույնականության կոլեկտիվ բաղադրիչը նշանակալի կորելյացիոն կապ

ունի օգնողական դիրքորոշումների սոցիալ-կոլեկտիվ ուղղվածության մակարդակի հետ (r=.372, p=.003): Վերոնշյալ բազմաթիվ նշանակալի ուժեղ և թույլ կորելյացիոն կապերի առկայությունը ցույց է տալիս այն, որ կամավորների նույնականության կառուցվածքային բաղադրիչները նշանակալիորեն պայմանավորում են սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակներում օգնողական դիրքորոշումների դրսևորման առանձնահատկությունները՝ ի տարբերություն ոչ կամավորների:

Ոչ կամավորների նույնականության բաղադրիչների և օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակների միջև նշանակալի կորելյացիոն կապերն ավելի սակավաթիվ են, քան կամավորների պարագայում (կորելյացիոն մատրիցան ներկայացված է Աղյուսակ 2-ում).

Աղյուսակ 2. **Ոչ կամավորների նույնականության բաղադրիչների և օգնողական դիրքորոշումների միջև կորելյացիաներ**

Նույնականության բաղադրիչներ		**Օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության մակարդակներ**				
		Միջանձնային	Սոցիալ-կոլեկտիվ	Սոցիալ-կոլեկտիվ իրավիճակային	Մշակութային	Ունիվերսալիստական
Անձնային	r	,394*	,040	,206	-,233	,086
	(p)	,017	,816	,229	,171	,619
Միջանձնային	r	,263	,229	,292	,043	-,153
	(p)	,122	,180	,084	,804	,373
Սոցիալական	r	,293	,315	,396*	-,208	-,113
	(p)	,082	,062	,017	,224	,513
Կոլեկտիվ	r	,283	,404*	,215	-,378*	,151
	(p)	,094	,015	,207	,023	,378

Ծանոթագրություն՝ r- կորելյացիոն գործակից (r-Pearson, r-Spearmen), p-վիճակագրորեն նշանակալիության գործակից * p< ,05 և ,01, p ** < ,001

Այսպես, նույնականության կոլեկտիվ բաղադրիչը թույլ արտահայտված ուղիղ համեմատական կապ ունի օգնողական դիրքորոշումների ուղղվածության սոցիալ-կոլեկտիվ (r=.404, p=.015) և հակադարձ համեմատական կապ՝ մշակութային մակարդակի հետ (r=-.387, p=.02): Դա ցույց է տալիս այն, որ ոչ կամավորների՝ սեփական խմբին պատկանելությունը կապված է այդ խմբի անդամներին օգնություն ցուցաբերելու և ուրիշ մշակույթի ներկայացուցչին չօգնելու դիրքորոշման հետ: Նույնականության սոցիալական բաղադրիչը թույլ կորելյացիոն կապ ունի

օգնողական դիրքորոշումների սոցիալ-կոլեկտիվ մակարդակի (r=.394, p=.017), իսկ նույնականության անձնային բաղադրիչը՝ միջանձնային մակարդակի հետ (r=.394, p=.017), քանի որ նույնականության բաղադրիչները և սոցիալական ուղղվածության համապատասխան մակարդակները գտնվում են առանցքի միևնույն կողմում:

Կամավորների և ոչ կամավորների օգնողական դիրքորոշումների և նույնականության բաղադրիչների հարաբերակցությունն արտահայտող կորելյացիոն կապերի համեմատությունից նկատում ենք, որ կամավորների դեպքում ավելի շատ են բազմաթիվ ուժեղ և թույլ կորելյացիոն կապերը վերոնշյալ հոգեկան կառույցների միջև, քան ոչ կամավորների: Դա վկայում է այն մասին, որ կամավորների անձի համար օգնության ցուցաբերումն ավելի նշանակալի երևույթ է, քան ոչ կամավորների համար, և ավելի հիմնավոր է ինտեգրված կամավորի անձի դիրքորոշումների համակարգում, մասնավորապես ինքնընկալման և ինքնաներկայացման մեջ, քան ոչ կամավորների դեպքում:

Կամավորների նույնականության բաղադրիչների և օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակների միջև փոխկապվածության պարզաբանման նպատակով, բացի կորելյացիոն վերլուծությունից, իրականացրել ենք նաև գծային ռեգրեսիոն վերլուծություն: Վերջինիս միջոցով հնարավոր է դուրս բերել, թե նույնականության որ բաղադրիչներն են առավել պայմանավորում օգնողական դիրքորոշումների դրսևորումը սոցիալական ուղղվածության այս կամ այն մակարդակում: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքների համաձայն՝ կամավորների նույնականության միջանձնային բաղադրիչն ուղիղ համեմատական կապ ունի օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության միջանձնային (β=.382, t=2.417, p=.000), սոցիալ-կոլեկտիվ (β=.274, t=1.751, p=.006) և ունիվերսալիստական (β=.42, t=2.609, p=.000) մակարդակների, ինչպես նաև ընդհանուր օգնողական (β=.331, t=2.099, p=.000) և ալտրուիստական (β=.311, t=1.049, p=.005) դիրքորոշումների հետ: Դա ենթադրում է, որ կամավորական գործունեությունում նույնականության միջանձնային բաղադրիչի գերակայությունը պայմանավորում է սոցիալական ուղղվածության միջանձնային, սոցիալ-կոլեկտիվ և ունիվերսալիստական մակարդակներում օգնողական և ալտրուիստական դիրքորոշումների ակտիվացումը: Սա, հավանաբար, վկայում է այն մասին, որ կամավորները, տարբեր իրավիճակներում օգնություն ցուցաբերելով ուրիշներին, իրենց անձն ընկալում և ներկայացնում են այնպես, ինչպես նշանակալի (մոտ մարդիկ, հարազատներ) մարդկանց հետ հարաբերություններում: Այսինքն, երբ կամավորներն

օգնություն են ցուցաբերում ուրիշներին, նրանք այդ հարաբերություններն ընկալում են որպես իրենց համար կարևոր մարդկանց կամ երևույթներին օգնության ցուցաբերում:

Կամավորների նույնականության սոցիալական բաղադրիչն ունի ուղիղ համեմատական կապ օգնողական դիրքորոշումների դրսևորման անձնային (β=.053, t=3.337, p=.001) և մշակութային (β=-.192, t=6.115, p=.034) սոցիալական ուղղվածության մակարդակների հետ: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ որոշ իրադրություններում նույնականության միջանձնային բաղադրիչից բացի՝ կարող է ակտիվանալ նաև կամավորների նույնականության սոցիալական բաղադրիչը՝ պայմանավորելով օգնողական դիրքորոշումների ակտիվացումը սոցիալական ուղղվածության անձնային և մշակութային մակարդակներում: Այսինքն, եթե կամավորն օգնություն ցուցաբերելիս սեփական անձը ներկայացնում է սոցիումի հետ համեմատման միջոցով, ապա նա ավելի հակված է օգնություն ցուցաբերել՝ ելնելով սեփական անձնային շահերից կամ այլ մշակույթի ներկայացուցչին սեփական անձը ցանկալի ներկայացնելուց:

Այսպիսով, կամավորական գործունեությունում նույնականության բաղադրիչներից գերակայում է միջանձնայինը, որը պայմանավորում է օգնողական դիրքորոշումների ակտիվացումը սոցիալական ուղղվածության բոլոր 5 մակարդակներում՝ նպաստելով դրանց ընդլայնմանը, իսկ մնացած՝ սոցիալական, անձնային և կոլեկտիվ բաղադրիչներն ունեն արտահայտվածության ավելի թույլ աստիճան: Սակայն, կախված կամավորի գործունեության բնույթից (աշխատանք մարդկանց հետ, էկոլոգիական աշխատանք, աջակցություն կազմակերպություններին և այլն), ինչպես նաև իր դիրքորոշումների ուղղվածությունից (սեփական անձին կամ ուրիշներին) նույնականության միջանձնային բաղադրիչի հետ միասին գերակայող դիրքում կարող է հայտնվել նաև նույնականության այլ բաղադրիչ (անձնային, կոլեկտիվ կամ սոցիալական):

Եզրակացություն և ամփոփում

Ամբողջացնելով հետազոտության արդյունքները՝ մենք առաջարկում ենք կամավորի դիրքորոշումների համակարգի մոդել, որն արտահայտում է կամավորների ինքնաներկայացման մակարդակների՝ նույնականության բաղադրիչների և սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակներում օգնողական դիրքորոշումների փոխհարաբերակցության առանձնահատկությունները (ներկայացված է Նկար 1-ում).



Նկար 1. Կամավորության դիրքորոշումների համակարգում օգնողական դիրքորոշումների մակարդակների և նույնականության բաղադրիչների փոխհարաբերության մոդել

Համաձայն այս մոդելի՝ բազմանշանակ կապեր են առկա կամավորների նույնականության միջանձնային բաղադրիչի և սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակներում դրսևորվող օգնողական դիրքորոշումների միջև, որը ցույց է տալիս նշանակալի անձանց օգնություն ցուցաբերելու և այդ համատեքստում սեփական անձին ներկայացնելու նշանակալիությունը կամավորների համար, այսինքն՝ կամավորների պարագայում գերակայում է նույնականության միջանձնային բաղադրիչը: Դա բացատրվում է նրանով, որ կամավորական գործունեություն իրականացնելիս անձի մեջ ակտիվանում են նշանակալի ու մտերիմ մարդկանց օգնելու ցանկությունը, և սեփական անձն ընկալվում է հենց նշանակալի մարդկանց հետ հարաբերությունների միջոցով, որն էլ, իր հերթին, հանգեցնում է մարդկանց օգնելու պատրաստակամությանը համապատասխան իրավիճակներում: Բացի վերոնշյալից, կամավորական գործունեության ընթացքում նույնականության տարբեր բաղադրիչները փոխկապակցված են սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակներում օգնողական դիրքորոշումների դրսևորումների հետ: Հետևաբար, կամավորների համար օգնության ցուցաբերումն ավելի նշանակալի երևույթ է սեփական անձի մասին պատկերացումների կառուցման գործընթացում, քան ոչ կամավորների համար՝ կապվելով կամավորի անձի ինքնընկալման և ինքնաներկայացման հետ:

Այսպիսով, կամավորական գործունեությունում անձի ինքնընկալման և ինքնաներկայացման ժամանակ նույնականության բաղադրիչներից գերակայում է միջանձնայինը՝ սեփական անձի մասին ձևավորվող

պատկերացումները նշանակալի մարդկանց հետ հարաբերություններում: Այն պայմանավորում է օգնողական դիրքորոշումների ակտիվացումը սոցիալական ուղղվածության տարբեր մակարդակներում՝ նպաստելով օգնելու հակվածության ակտիվացմանը և դրանց ընդլայնմանը տարբեր սոցիալական իրավիճակներում: Հետևաբար, կամավորի համար օգնելու ցանկությունը պայմանավորվում է սեփական անձի այն ընկալմամբ, որ նա օգնում է իր համար կարևոր՝ նշանակալի մարդկանց և ներդրում է ունենում կարևոր սոցիալական երևույթների զարգացման մեջ: Եվ օգնելով նշանակալի մարդկանց՝ կամավորն ավելի է հստակեցնում իր պատկերացումները սեփական անձի մասին կամավորական գործունեության կատարման ընթացքում: Տվյալներն անուղղակիորեն վկայում են նաև այն մասին, որ չնայած հայաստանյան իրականության մեջ նոր սոցիալական պրակտիկա լինելուն՝ կամավորությունն այն իրականացնողների համար արդեն դառնում է ներքնայնացված դիրքորոշումների վրա հիմնված, անձնապես նշանակալի գործունեություն:

Հետևաբար, դիրքորոշումների համակարգի դուրս բերված մոդելը կարևոր հիմք է հանդիսանում ոչ միայն կամավորության տեսական վերլուծությունների և փորձարարական հետազոտությունների զարգացման համար, այլև հնարավորություն է ընձեռում բացահայտել կամավորի անձի դինամիկ կառուցվածքը և դրա փոփոխություններն ու փոխազդեցությունները սոցիալական միջավայրի բազմաթիվ իրավիճակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Кудринская, Л.** Добровольческий труд: сущность, функции, специфика, *Социологические исследовани*, №5, 2006, с. 15-22.
2. **Левдер, И.** Добровольческое движение как одна из форм социального обслуживания. *Социальная работа,* №2, 2006, с. 12-16.
3. **Олчман, М., Джордан, П.** Основные понятия, в кн: *Добровольцы - ценный источник*, Университет Д. Хопкинса, 1997. Հասանելի է http://www.besplatno1.narod.ru/FAQ.htm
4. **Brewer, M., Gardner, W.** Who Is This "We"? Levels of Collective Identity and Self Representations. Ohio State University, *Journal of Personality and Social Psychology*, Vol. 71, N 1, 1996, pp. 83-93.
5. **Cheek, J., Tropp, L.** The Aspects of Identity Questionnaire (AIQ-IV), 2003. Հասանելի է http://www.wellesley.edu/Psychology/Cheek/identity.html
6. **Elshaug, C., Metzer, J.** *Personality attributes of volunteers and paid workers engages in similar occupational tasks*. University of South Australia, Adelaide, Australia, 2001.
7. **Gaertner, G., Sedikides, C., Luke, M., O'Mara, E., Iuzzini, J., Jackson, L., Cai H., Cai W.** A motivational hierarchy within: Primacy of the individual self, relational self, or collective self? *Journal of Experimental Social Psychology*, N 48, 2012, pp. 997-1013.

8. **Haski-Leventhal, D**. Altruism and Volunteerism: The perceptions of altruism in four disciplines and their impact on the study of volunteerism. *Journal for the Theory of Social Behavior*, Blackwell Publishing Ltd., 39 (3), 2009, pp. 271-299.
9. **Lindholm, Ch.** *Culture and identity: The history, theory, and practice of psychological anthropology*. Oneworld Publications Limited, 2007.
10. **Rushton, J., Chrisjohn, R., Fekken, G.** The Altruistic Personality and The Self-Report Altruism Scale. Person. *Individ. Differ.,* Pergamon Press Ltd., Vol.2, 1981, pp. 293-302.
11. **Sagiv, L., Schwartz, Sh.** Value priorities and subjective well-being: direct relations and congruity effects, *European Journal of Social Psychology*, N 30, 2000, pp. 177-198.
12. **Sedikides, C., Brewer, M.** *Individual Self, Relational Self, and Collective Self. Partners, Opponents, or Strangers?* 2010. Հասանելի է http://emergentbydesign.pbworks.com/f/Individual_self.pdf
13. **Taylor, Sh., Peplau, L., Sears, D.** *Social psychology*, NJ, Pearson Education Inc., 2006.
14. **Wegner, D., Crano, W.** Racial Factors in Helping Behavior: An Unobtrusive Field Experiment. *Journal of Personality and Social Psychology*. Behavior, Vol. 32, N 5, 2009, pp. 901-905.

Օգնողական դիրքորոշումների սոցիալական ուղղվածության մակարդակների ուսումնասիրման հարցարան

Մաս I

Պատկերացրեք մի իրավիճակ, երբ անցնում եք փողոցով և տեսնում մի մարդու, որն ունի օգնության կարիք (օրինակ, ծանրոցը պատռվել է, և նրա իրերը թափվել են գետնին): Գնահատեք յուրաքանչյուր տարբերակի համար 1-ից 4 գնահատման սանդղակով (1 - չեմ օգնի, 2 - ավելի շուտ չեմ օգնի, 3 - ավելի շուտ կօգնեմ, 4 – ամեն ինչ կանեմ, որ օգնեմ), թե որքանով եք հակված նրան օգնություն ցուցաբերել, եթե այդ մարդը.

Ձեզ մոտ մարդ է (ընկեր, ընտանիքի անդամ և այլն)	
Ձեզ ծանոթ մեկն է (հարևան, աշխատակից, համակուրսեցի և այլն)	
Խոցելի խմբի ներկայացուցիչ է (հաշմանդամ, երեխա, ծեր կին/տղամարդ և այլն)	
Այլ մշակույթի ներկայացուցիչ է (օտարերկրացի)	
Անծանոթ մարդ է	

Այժմ պատկերացրեք մի իրավիճակ, երբ մի մարդ ձեզնից խնդրում է մի ինչ-որ բան: Գնահատեք յուրաքանչյուր տարբերակի համար 1-ից 4 գնահատման սանդղակով (1 - չեմ օգնի, 2 - ավելի շուտ չեմ օգնի, 3 - ավելի շուտ կօգնեմ, 4 – ամեն ինչ կանեմ, որ օգնեմ), թե որքանով եք հակված կատարել նրա խնդրանքը, եթե այդ մարդը.

Ձեզ մոտ մարդ է (ընկեր, ընտանիքի անդամ և այլն)	
Ձեզ ծանոթ մեկն է (հարևան, աշխատակից, համակուրսեցի և այլն)	
Խոցելի խմբի ներկայացուցիչ է (հաշմանդամ, երեխա, ծեր կին/տղամարդ և այլն)	
Այլ մշակույթի ներկայացուցիչ է (օտարերկրացի)	
Անծանոթ մարդ է	

Մաս II

Հրահանգ. Ստորև նշված է 25 պնդում, որոնք կարող են այս կամ այն չափով ճշմարիտ լինել ձեր մասին: 1-ից 5 բալանոց սանդղակով գնահատեք Ձեր համաձայնության աստիճանը (1 - ընդհանրապես համաձայն չեմ, 2 - համաձայն չեմ, 3 - և՛ համաձայն եմ, և՛ համաձայն չեմ, 4 - համաձայն եմ, 5 - լիովին համաձայն եմ):

Բանալի. Սոցիալական ուղղվածության 5 մակարդակներում օգնողական դիրքորոշումները դուրս բերող հարցերն են.

Անձնային մակարդակ՝ 1, 6, 11, 16, 21;

Միջանձնային մակարդակ՝ 2, 7, 12, 17, 22;

Սոցիալ-կոլեկտիվ մակարդակ՝ 3, 8, 13, 18, 23;
Մշակութային մակարդակ՝ 4, 9, 14, 19, 24;
Ունիվերսալ մակարդակ՝ 5, 10, 15, 20, 25;
Հակադարձ հարցեր՝ 14, 15, 24:

1.	Եթե ես օգնեմ այլ մարդու, ապա կունենամ բավարարվածության զգացում:
2.	Ես կօգնեմ իմ շրջապատի այն մարդկանց, որոնց բարեկեցությունը կարևոր է ինձ համար:
3.	Ես կմոտենամ փողոցում ընկած ծեր տղամարդուն/կնոջը և կբարձրացնեմ նրան:
4.	Ես կուղեկցեմ ուղղություն փնտրող արտասահմանցուն դեպի իր ցանկացած վայրը:
5.	Եթե դու օգնես անծանոթին, ապա մի օր էլ քեզ կօգնեն:
6.	Օգնելով ուրիշին՝ ես ինձ պետքական կզգամ:
7.	Ես կօգնեմ մտերիմ աշխատակցիս/համակուրսեցուս ավարտել աշխատանքը, եթե անգամ հոգնած եմ:
8.	Մարդիկ պատասխանատու են իրենց բարեկամների բարեկեցության համար:
9.	Ես կօգնեմ այլ ազգի ներկայացուցչին, եթե նա ինձ դիմի ինչ-որ հարցով/խնդրանքով:
10.	Բոլոր մարդիկ արժանի են օգնություն ստանալու:
11.	Ինձ բնորոշ գծերից է այլ մարդկանց օգնելը:
12.	Ես կտամ իմ աշխատած գումարը քրոջս/եղբորս, եթե նա դրա կարիքն ունենա:
13.	Հաշմանդամներին պետք է ամեն կերպ օգնել, որ ներգրավվեն հասարակության մեջ:
14.	Ես ավելի հակված եմ օգնել իմ երկրի ներկայացուցչին, քան այլազգի մարդուն:
15.	Երբեմն լավություն անելը սխալ է:
16.	Այլ մարդկանց օգնելը լավ է նաև իմ անձի համար:
17.	Եթե ընկերս/ընկերուհիս դժվարություններ ունենա, ապա ես անպայման կփորձեմ նրան աջակցել:
18.	Ես հակված եմ օգնել մարդկանց, որովհետև այդպես է ընդունված իմ շրջապատի/շրջանի մարդկանց մեջ:
19.	Մարդկանց պետք է օգնել անկախ ազգային պատկանելությունից:
20.	Ցանկալի է ձգտել որքան հնարավոր է ավելի շատ բան անել ուրիշների համար:
21.	Ես կարող եմ ասել, որ եսասեր չեմ:
22.	Ես դժվարությամբ կմերժեմ հարազատիս, երբ նա ինձ խնդրի ինչ-որ բանի համար:
23.	Ես կօգնեմ անծանոթ երեխային, եթե տեսնեմ, որ նա մոլորվել է ու ինչ-որ մեկին է փնտրում:
24.	Հայն առաջին հերթին պետք է հային օգնի:
25.	Կյանքում ամենակարևոր արժեքներից մեկն այլ մարդկանց մասին հոգ տանելն է: